

ԿՈՆՎԵՆՑԻԱ

**ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ, ՈՒՂԵԲԵՌԻ, ԱՊՐԱՆՔԱԲԵՌԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴՅՈՒՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**



ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2019 թվական

Կոնվենցիա

**ուղեւորների, ուղեբեռի, ապրանքաբեռի միջազգային երկաթուղային
փոխադրման ժամանակ սահմանների հատման պայմանների դյուրացման մասին**

Սույն կոնվենցիայի մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

ընդունելով ուղեւորների, ուղեբեռի, ապրանքաբեռի միջազգային երկաթուղային փոխադրումներ իրականացնելիս սահմանների հատման դյուրացման եւ արագացման անհրաժեշտությունը՝ պետական հսկողության անցկացման արդյունավետության պահպանմամբ,

հաշվի առնելով ուղեւորների անվտանգության, հարմարության, հարմարավետության եւ սպասարկման բարձր որակի ապահովման կարեւորությունը,

ընդգծելով գնացքների ընթացքի ժամանակի կրճատման նշանակալիությունը երկաթուղային փոխադրումների մրցունակության բարձրացման համար,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Գլուխ 1

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Սույն կոնվենցիայի նպատակներով գործածվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

ա) «երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածք» (այսուհետ՝ ենթակառուցվածք)՝ տեխնոլոգիական համալիր, որն իր մեջ ներառում է երկաթուղային գծեր եւ այլ կառույցներ, երկաթուղային կայարաններ, էլեկտրամատակարարման սարքեր, կապի ցանցեր, ազդանշանման, կենտրոնացման եւ ուղեփակման համակարգեր, տեղեկատվական համալիրներ ու շարժման կառավարման համակարգ ներառող եւ այդ համալիրի գործունեությունն ապահովող այլ շենքեր, շինություններ, կառույցներ, սարքեր եւ սարքավորումներ.

բ) «միջազգային երկաթուղային փոխադրում»՝ ուղեւորների, ուղեբեռի եւ ապրանքաբեռի՝ տարբեր պետությունների տարածքում տեղակայված երկու եւ ավելի երկաթուղային կայարանների միջեւ իրականացվող երկաթուղային փոխադրում, ինչպես նաեւ այլ պետությունների (պետության) տարածքով մեկ պետության կայարանների միջեւ փոխադրում.

գ) «ուղեւոր»՝ վավերական ուղեւորության փաստաթղթով (տոմսով) գնացքով ուղեւորություն կատարող կամ ուղեւորության փաստաթուղթ (տոմս) ունեցող եւ ուղեւորությունից անմիջապես առաջ կամ դրանից անմիջապես հետո նստեցման կամ իջեցման ժամանակ երկաթուղային կայարանի տարածքում, այդ թվում՝ ուղեւորների կառամատույցի վրա գտնվող ֆիզիկական անձ.

դ) «ուղարկող»՝ ուղեբեռը, ապրանքաբեռը փոխադրման համար ներկայացրած եւ փոխադրման փաստաթղթում որպես ուղեբեռի, ապրանքաբեռի ուղարկող նշված ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

ե) «փոխադրող»՝ իրավաբանական անձ, որն իրականացնում է ուղեւորների, ուղեբեռի եւ ապրանքաբեռի փոխադրման գործունեություն եւ ուղեւորի կամ ուղարկողի հետ կնքել է փոխադրման պայմանագիր, որին համապատասխան պարտավորվել է ուղեւորին, ուղեւորի ուղեբեռը եւ ապրանքաբեռը ուղարկման կետի երկաթուղային կայարանից հասցնել մինչեւ նշանակման կետի երկաթուղային կայարան.

զ) «երկաթուղային անցակետ»՝ երկաթուղային կայարանի սահմաններում գտնվող տարածք՝ սահմանագծին կամ դրա մոտ, ինչպես նաեւ տեղանքի հատուկ առանձնացված այլ տեղամաս՝ համապատասխան ենթակառուցվածքով, որտեղ անցկացվում են սահմանով ուղեւորների, ուղեբեռի, ապրանքաբեռի՝ երկաթուղով անցման համար անհրաժեշտ պետական հսկողություն, շահագործման եւ վարչարարական ընթացակարգեր.

է) «ծեռքի ուղեբեռ»՝ ուղեւորի իրերը, որոնք ուղեւորը փոխադրում է վագոնում, որոնց փոխադրման արժեքը ներառված է ուղեւորության արժեքի մեջ, եւ որոնք չեն գերազանցում քաշի եւ եզրաչափքերի սահմանված նորմերը, որոնց պահպանվածությունն ապահովվում է ուղեւորը.

ը) «ուղեբեռ»՝ ուղեւորի իրերը (առարկաները), որոնք փոխադրողի կողմից ընդունվում են ուղեւորատար գնացքի ուղեբեռների վագոնում փոխադրման համար.

թ) «ապրանքաբեռ»՝ առարկաներ, որոնք ֆիզիկական կամ իրավաբանական անձից ընդունվում են փոխադրողի կողմից՝ ուղեւորատար գնացքի ուղեբեռների վագոնում փոխադրման համար այն Կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում այդ առարկաներն ընդունվում են փոխադրման համար.

ժ) «ենթակառուցվածքի կառավարիչ»՝ իրավաբանական անձ, որը Կողմի օրենսդրությանը համապատասխան լիազորված է իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձանց այդ Կողմի տարածքում ենթակառուցվածքի օգտագործման ծառայություններ մատուցել.

ժա) «ճառայողական անձնակազմ»՝ գնացքն ուղեկցող՝ փոխադրողի կամ ընթացուղում ուղեւորների սպասարկում իրականացնող այլ կազմակերպությունների աշխատակիցների խումբ.

ժբ) «պետական հսկողություն»՝ Կողմերի իշխանության լիազորված մարմինների եւ պաշտոնատար անձանց գործունեություն, որն իրականացվում է երկաթուղային տրանսպորտով միջազգային ուղեւորային փոխադրումներ իրականացնելիս ուղեւորների, ուղեբեռի, ապրանքաբեռի կողմից սահմանները հատելու ժամանակ, ուղղված է Կողմի օրենսդրության խախտումների կանխարգելմանը, հայտնաբերմանն ու կանխմանը, ներառում է սահմանային, մաքսային, անասնաբուժական, սանիտարակարանտինային, բուսասանիտարական հսկողությունը եւ համապատասխան Կողմի կողմից սահմանված պետական հսկողության այլ տեսակներ:

Հոդված 2

Սույն կոնվենցիայով կանոնակարգվում են միջազգային երկաթուղային փոխադրումների հետեւյալ հարցերը՝

ա) Կողմերի համագործակցության կազմակերպում եւ սահմանների հատման պայմանների դյուրացման հարցերով պետական հսկողության մարմինների աշխատանքի համակարգում.

բ) համալիր միջոցառումների սահմանում՝ ուղղված պետական հսկողության անցկացման պայմանների համաձայնեցմանը, այդ թվում՝ պետական հսկողություն անցկացնելիս օգտագործվող փաստաթղթերի ձեւակերպմանը ներկայացվող պահանջների եւ անցկացվող պետական հսկողության ընթացակարգերի ներդաշնակեցմանը.

գ) երկաթուղային անցակետերի աշխատանքի արդյունավետության բարձրացում եւ սահմաններին պետական հսկողության անցկացման ժամանակի կրճատում.

դ) սահմաններին պետական հսկողություն անցկացնող սահմանային, մաքսային, այլ պետական մարմինների ներկայացուցիչների եւ շահագրգիռ փոխադրողների համակարգված աշխատանքի կազմակերպում:

Հոդված 3

1. Սույն կոնվենցիայի նպատակների իրագործման եւ դրա կիրառման գործնական մեխանիզմների մշակման համար Կողմերը կարող են կնքել երկկողմ համաձայնագրեր:

2. Երկկողմ համաձայնագրերի պայմանները կարող են լրացնել եւ (կամ) պարզաբանել սույն կոնվենցիայի դրույթները եւ չեն կարող հակասել դրա դրույթներին:

3. Սույն կոնվենցիայի դրույթները խոչընդոտ չեն ավելի շատ արտոնությունների կիրառման համար, որոնք Կողմերը տրամադրում են կամ կցանկանան տրամադրել միակողմ հիմնադրույթների հիման վրա կամ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերին համապատասխան՝ պայմանով, որ այդ արտոնությունները չեն խոչընդոտում սույն կոնվենցիայի դրույթների կիրառումը:

4. Սույն կոնվենցիան չի առնչվում Կողմերի այն իրավունքներին եւ պարտավորություններին, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից են Կողմերը, կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություններում դրանց անդամակցությունից:

Հոդված 4

1. Կողմերը համագործակցում են միջազգային երկաթուղային փոխադրումների ընթացքում սահմանների հատման հետ կապված բոլոր ոլորտներում փաստաթղթերի ձեւակերպմանը ներկայացվող պահանջների եւ (կամ) կատարվող ընթացակարգերի առավել լիարժեք միատեսակության ապահովման նպատակներով:

2. Կողմերը գործադրում են բոլոր ջանքերը միջազգային ստանդարտների, նոր տեխնոլոգիաների եւ լավագույն փորձի օգտագործման համար՝ երկաթուղային անցակետերի աշխատանքի բարելավման եւ միջազգային երկաթուղային փոխադրումների ընթացքում սահմանների հատման հետ կապված բոլոր ոլորտներում կատարվող ընթացակարգերի դյուրացման նպատակով:

3. Կողմերն իրենց պատրաստակամությունն են հայտնում երկաթուղային անցակետերի աշխատանքի արդյունավետության բարձրացման եւ պետական հսկողության անցկացման ժամանակի կրճատման մասով գործնական նվաճումների փոխանակման գործում:

Հոդված 5

Պետական հսկողությունն անցկացվում է հետեւյալ վայրերում՝

ա) գնացքում՝ սահմանային (շարժահաղորդ) կայարանում կայանման ժամանակ.

բ) Կողմի երկաթուղային անցակետում (անցակետերում).

գ) գնացքում՝ Կողմերի երկաթուղային անցակետերի կամ կայարանների միջեւ շարժման ժամանակ.

դ) մասամբ երկաթուղային անցակետում, մասամբ գնացքի ընթացքի ժամանակ:

Հոդված 6

1. Կողմերի պետական հսկողության մարմիններն իրականացնում են ուղեւորների փաստաթղթերի եւ նրանց ձեռքի ուղեբեռի, ուղեբեռի, ինչպես նաեւ ապրանքաբեռի հսկողության համաձայնեցված գործողություններ:

2. Պետական հսկողության անցկացման վայրը (վայրերը), դրա եղանակը, տեսակը, կարգը, պետական հսկողության անցկացման ժամանակի նորմատիվները, պետական հսկողության մարմիններ փոխանցելու ենթակա՝ ուղեւորների մասին տվյալները սահմանվում են Կողմերի օրենսդրությամբ եւ առանձին երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերով:

3. Առանձին երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերով Կողմերը կարող են պայմանավորվել ուղեւորատար գնացքի առանց կանգառ ընթացքի մասին՝ երկաթուղային անցակետերով միջազգային երկաթուղային փոխադրումների ժամանակ, այդ թվում՝ այդ ուղեւորատար գնացքի՝ մի Կողմի տարածքից եւ դեպի այդ տարածք մյուս Կողմի կամ մյուս Կողմերի տարածքով տարանցիկ ընթացքի ժամանակ՝ հաշվի առնելով ուղեւորների, ուղեբեռի, ապրանքաբեռի արդյունավետ եւ բավարար պետական հսկողության հնարավորությունը:

4. Ուղեւորատար գնացքի ընթացումում երկաթուղային անցակետերով դրա առանց կանգառ ընթացքի եւ (կամ) մյուս Կողմի կամ մյուս Կողմերի տարածքով տարանցիկ ընթացքի ժամանակ ուղեւորների իջեցում (նստեցում), ինչպես նաեւ ուղեբեռի (ապրանքաբեռի) բեռնաթափում (բեռնում) իրականացնելու արգելքին հետեւելու նկատմամբ հսկողությունը փոխադրողի պարտականությունն է:

Հոդված 7

1. Պետական հսկողություն անցկացնելիս Կողմերը միջոցներ են ձեռնարկում գնացքների չվացուցակի խախտումներ թույլ չտալու համար:

2. Կողմերի ենթակառուցվածքի կառավարիչները ժամանակին տեղեկատվություն են փոխանակում ուղեւորատար գնացքների շարժման չվացուցակի եւ դրա փոփոխությունների, միջազգային երկաթուղային փոխադրումներ իրականացնող ուղեւորատար գնացքների կազմերի սխեմաների,

ինչպես նաև այդ գնացքների չեղարկման եւ (կամ) նշանակման մասին՝ Կողմերի օրենսդրությանը եւ առանձին երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերին համապատասխան պետական հսկողության մարմինների հետագա ծանուցման համար:

Հոդված 8

Միջազգային երկաթուղային փոխադրումներ կազմակերպելիս եւ իրականացնելիս Կողմերը ձգտում են պարզեցնել փաստաթղթերի եւ տեղեկությունների փոխանակման ընթացակարգերը՝ Կողմերի օրենսդրությամբ եւ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերով նախատեսված տեղեկությունների ծավալով տվյալների էլեկտրոնային փոխանակման համակարգերի օգտագործման միջոցով:

Գլուխ 2

Միջազգային երկաթուղային փոխադրումների ժամանակ պետական հսկողության մարմինների պաշտոնատար անձանց եւ ծառայողական անձնակազմի կողմից սահմանները հատելը

Հոդված 9

Պետական հսկողության մարմինների պաշտոնատար անձինք ազատվում են Կողմերի կողմից սահմանվող փաստաթղթերի մասով պետական հսկողություն անցկացնելու շրջանակներում միջազգային երկաթուղային փոխադրումների ժամանակ սահմանը հատելու ձեւականությունները պահպանելուց:

Հոդված 10

1. Կողմերը ձգտում են դյուրացնել վիզաների տրամադրման ընթացակարգը, ինչպես նաև միջազգային երկաթուղային փոխադրումների կազմակերպմանն ու իրականացմանը մասնակցող Կողմերի՝ գնացքի բրիգադների աշխատակիցների, սահմանային (կամ շարժահաղորդ) կայարանների ծառայողական անձնակազմի եւ աշխատակիցների կողմից Կողմերի սահմանների հատման ընթացակարգերը բոլոր դիմողների մասով՝ տվյալ ոլորտում դրական փորձին համապատասխան:

2. Սույն հոդվածի առաջին պարբերության մեջ հիշատակված անձանց կողմից սահմանների հատման կարգը՝ ներառյալ նրանց կարգավիճակը հաստատող ծառայողական փաստաթղթերը սահմանվում են երկկողմ համաձայնագրերի հիման վրա:

Գլուխ 3

Պետական հսկողության կազմակերպումը

Հոդված 11

Կարգավորված եւ արագացված պետական հսկողություն անցկացնելու համար Կողմերը ձգտում են պահպանել միջազգային երկաթուղային փոխադրումների համար բաց երկաթուղային անցակետերին ներկայացվող հետեւյալ նվազագույն պահանջները՝

ա) շենքերի (շինությունների), կառույցների, սարքավորումների եւ տեխնիկական միջոցների առկայություն, որոնք հնարավորություն են տալիս երկաթուղային անցակետերում համապատասխան ամենօրյա շուրջօրյա պետական հսկողություն անցկացնել.

բ) երկաթուղային անցակետերի եւ դրանց հարակից տեղամասերի տեխնիկական ապահովումը պետք է նպաստի պետական հսկողության անցկացմանն առանց ուղեւորատար գնացքների չվացուցակի խախտման.

գ) սարքավորումների, սարքերի, տեղեկատվական համակարգերի եւ կապի միջոցների առկայություն, որոնք հնարավորություն են տալիս փոխանակել նախնական տեղեկատվություն, այդ թվում՝ երկաթուղային անցակետերին ուղեւորատար գնացքների մոտենալու մասին.

դ) երկաթուղային անցակետերում փոխադրողների, ենթակառուցվածքի կառավարիչների՝ անհրաժեշտ թվով որակավորված անձնակազմի, պետական հսկողության մարմինների պաշտոնատար անձանց առկայություն՝ հաշվի առնելով փոխադրումների ծավալը.

ե) երկաթուղային անցակետերի փոխադրունակությունն ու թողունակությունը պետք է բավարար լինեն փոխադրումների ծավալների համար.

զ) երկաթուղային անցակետերը պետք է սարքավորված լինեն տեխնիկական միջոցներով, տեղեկատվական տեխնոլոգիայի եւ կապի համակարգերով, որպեսզի ապահովեն պետական հսկողության մարմինների եւ փոխադրողների կողմից իրենց իրավասությունների սահմաններում իրականացվող՝ շարժակազմի տեխնիկական գնման եւ ստուգման մասին տվյալների ստացման ու կիրառման հնարավորությունը նախքան այդ անցակետեր շարժակազմի ժամանումը, եթե Կողմերը գործողության մեջ չեն դնում այդ գործառույթները կատարող այլընտրանքային միջոցներ:

Գլուխ 4

Պետական հսկողության անցկացումը

Հոդված 12

1. Սահմանը հատող ուղեւորների, ուղեբեռի, ապրանքաբեռի մասին տեղեկատվությունը նախօրոք (տեխնոլոգիական առանձնահատկություններին համապատասխան) փոխադրողի կողմից փոխանցվում է պետական հսկողության մարմիններին (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով): Տվյալ փոխանցման դեպքում պետք է հաշվի առնվեն տեղեկատվությունը փոխանցող Կողմի օրենսդրության դրույթներում պարունակվող սահմանափակումները: Եթե փոխանցվող տեղեկատվությունը պարունակում է Կողմի օրենսդրությամբ պահպանվող գաղտնիք (պետական, առևտրային, բանկային եւ (կամ) այլ), գնացքի բրիգադների աշխատակիցները, պետական հսկողության մարմինների պաշտոնատար անձինք եւ ծառայողական անձնակազմը իրենց վրա են վերցնում առանց այդ տեղեկատվությանը տիրապետող կամ այն օգտագործելու եւ տնօրինելու իրավունքներ ունեցող անձի գրավոր համաձայնության այդ տեղեկատվությունը երրորդ անձանց չհայտնելու պարտավորությունները:

2. Կողմերի պետական հսկողության մարմինները միմյանց միջեւ տեղեկատվություն են փոխանակում՝ պետական հսկողության անցկացման արդյունավետությունը բարձրացնելու եւ դրա անցկացման ձեւերը նախօրոք ընտրելու նպատակներով:

Հոդված 13

1. Պետական հսկողություն կարող է անցկացվել Կողմերի պետական հսկողության մարմինների կողմից համատեղ՝ Կողմերի երկկողմ հանաձայնագրերին համապատասխան:

2. Համատեղ պետական հսկողություն կարող է անցկացվել ինչպես մեկ Կողմի տարածքում, այնպես էլ գնացքում ընթացքի ժամանակ՝ սույն կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

3. Կողմերը պետք է առանձին երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կնքելու միջոցով համաձայնեցնեն համատեղ պետական հսկողության անցկացման վայրը (վայրերը) եւ կարգը:

Հոդված 14

1. Անկախ պետական հսկողություն անցկացնելու վայրից, որոնց ցանկը նշված է 5-րդ հոդվածում, եթե դա չի պահանջում ստացիոնար կիրառվող ձեւերի եւ մեթոդների օգտագործում, եւ Կողմերը երկկողմ համաձայնագրով չեն սահմանել պետական հսկողության անցկացման առանձնահատկությունները, պետական հսկողությունն անցկացվում է անմիջապես գնացքի վագոններում:

2. Փոխադրողը միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար, որ մինչեւ պետական հսկողության անցկացման ավարտն ուղեւորն ուղեւորության փաստաթղթին (տոմսին) համապատասխան զբաղեցվող տեղում գտնվի:

3. Կողմի օրենսդրությամբ սահմանված՝ պետական հսկողության ստացիոնար կիրառվող ձեւերի եւ մեթոդների օգտագործման անհրաժեշտության դեպքերում այդ հսկողությունը պետք է անցկացվի երկաթուղային անցակետերի՝ դրա համար հատուկ առանձնացված եւ սարքավորված շենքային տարածքներում:

4. Ուղեւորների անվտանգությունն ապահովելու նպատակներով փոխադրողը ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները վագոնի կոնստրուկցիային չարտոնված միջամտություն թույլ չտալու համար: Եթե հայտնաբերվել է այդպիսի միջամտություն, ապա փոխադրողի ծառայողական անձնակազմը տեղեկատվություն է տրամադրում այն Կողմի պետական հսկողության մարմինների պաշտոնատար անձանց, որի տարածքով ընթանում է գնացքը:

Հոդված 15

1. Կողմերի երկաթուղային անցակետերի միջև ընթացքի ժամանակ ուղեւորատար գնացքում պետական հսկողությունն անցկացվում է այդ Կողմերի առանձին երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերին համապատասխան:

2. Մեկ Կողմի տարածքում սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան պետական հսկողության անցկացման տեսակների հաջորդականության մասին առանձին համաձայնագրի բացակայության դեպքում կիրառվում է հետեւյալ հաջորդականությունը՝

ա) մեկնման Կողմի պետական հսկողության մարմինների կողմից անցկացվող մաքսային եւ այլ տեսակի հսկողություն.

բ) մեկնման Կողմի պետական հսկողության մարմինների կողմից անցկացվող սահմանային հսկողություն.

գ) ժամանման Կողմի պետական հսկողության մարմինների կողմից անցկացվող սահմանային հսկողություն.

դ) ժամանման Կողմի պետական հսկողության մարմինների կողմից անցկացվող մաքսային եւ այլ տեսակի հսկողություն:

3. Երկկողմ համաձայնագրերով կարող է սահմանվել պետական հսկողության անցկացման այլ հաջորդականություն, այդ թվում՝ նախատեսվում է մեկ Կողմի պետական հսկողության մարմինների պաշտոնատար անձանց՝ մյուս Կողմի տարածքում գտնվելու հնարավորությունը:

4. Ժամանման Կողմի պետական հսկողության մարմինների պաշտոնատար անձինք պետական հսկողություն են անցկացնում գնացքի միայն այն մասերում, որոնցում արդեն պետական հսկողություն է անցկացվել մեկնման Կողմի պետական հսկողության մարմինների պաշտոնատար անձանց կողմից:

Հոդված 16

1. Կողմերն ապահովում են երկկողմ համաձայնագրերով սահմանված՝ երկաթուղային անցակետերում ուղեորատար գնացքների ընդունման եւ փոխանցման տեխնոլոգիական գործողությունների կատարման, պետական հսկողության անցկացման ժամանակի նորմատիվների պահպանումը եւ մշտապես ձգտում են ժամանակի նորմատիվների կրճատմանը՝ կատարվող գործողությունների օպտիմալացման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման եւ դրանց մշտական արդիականացման միջոցով:

2. Երկաթուղային անցակետերում Կողմերն իրականացնում են ուշացած ուղեորատար գնացքների կամ վագոնների գրանցում եւ նշված տեղեկատվությունը փոխանցում են շահագրգիռ Կողմերին, որոնք կատարում են հետագա վերլուծություն եւ առաջարկում են պարապուրդի կրճատման միջոցներ:

Հոդված 17

1. Առանձին համաձայնագրերի հիման վրա Կողմերը սահմանում են այն Կողմերից մեկի սահմանին մոտ կամ դրա ներսում գտնվող երկաթուղային անցակետերը, որոնց տարածքում, սույն կոնվենցիայի 5-րդ հոդվածի «բ» կետին համապատասխան, անցկացվում է պետական հսկողություն:

2. Այդ երկաթուղային անցակետերի սահմանման բոլոր դեպքերում առանձին համաձայնագրերում նշվում է այն գոտին, որում Կողմերի պետական հսկողության մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն զննելու Կողմերի սահմանը ցանկացած ուղղությամբ հատող ուղեորներին, նրանց ձեռքի ուղեբեռը, ուղեբեռը, ինչպես նաեւ ապրանքաբեռը:

3. Այն գոտիները, որտեղ Կողմերի պետական հսկողության մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն զննելու ուղեորներին, սովորաբար լինում են՝

ա) երկաթուղային անցակետի մաս կազմող շենքերը, շինությունները եւ հարթակները.

բ) ուղեորատար գնացքները:

Հոդված 18

Կողմերը ձգտում են սույն կոնվենցիայի 5-րդ հոդվածի «գ» կետին համապատասխան կազմակերպել պետական հսկողության անցկացումն ուղեորատար գնացքի ընթացուղում՝ հատկապես հետեւյալ դեպքերում՝

ա) երբ այդ գնացքի՝ մինչեւ յուրաքանչյուր սահմանակից Կողմի երկաթուղային անցակետ եւ դրանից հետո առանց կանգառ ընթացքի տեւողությունը բավարար է պետական հսկողություն անցկացնելու համար.

բ) սայլակի լայնության ավտոմատ փոփոխման համակարգերով ուղեորատար գնացքներով միջազգային փոխադրում իրականացնելիս՝ կախված օգտագործվող ռելսամեջից.

գ) մեծ արագությամբ ընթացող շարժակազմ օգտագործելիս:

Հոդված 19

Կողմերը ձգտում են պետական հսկողության անցկացումը սույն կոնվենցիայի 5-րդ հոդվածի «դ» կետին համապատասխան կազմակերպել մասամբ երկաթուղային անցակետում, մասամբ ուղեորատար գնացքի ընթացուղում այն դեպքերում, երբ գնացքի՝ մինչեւ երկաթուղային անցակետ կամ դրանից հետո առանց կանգառ ընթացքի տեւողությունը բավարար է միայն Կողմերից մեկի տարածքում պետական հսկողություն անցկացնելու համար:

Գլուխ 5

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 20

Որպես սույն կոնվենցիայի քարտուղարություն է նշանակվում Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովը:

Հոդված 21

1. Սույն կոնվենցիան Նյու Յորքում Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հաստատություններում բաց է բոլոր պետությունների կողմից ստորագրման համար:

2. Սույն կոնվենցիան ենթակա է այն ստորագրած պետությունների կողմից վավերացման, ընդունման կամ հաստատման: Սույն կոնվենցիան բաց է այն չստորագրած բոլոր պետությունների կողմից միանալու համար:

3. Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունները եւս կարող են ինքնուրույն կամ իրենց բոլոր մասնակից պետությունների կամ դրանցից մի քանիսի հետ դառնալ կոնվենցիայի կողմեր՝ սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերությունների դրույթներին համապատասխան:

4. Իրենց իրավասության սահմաններում գտնվող հարցերի մասով տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություններն ունեն նույն իրավունքները եւ կատարում են նույն պարտականությունները, որոնք սույն կոնվենցիայով սահմանված են դրա մասնակից պետությունների համար: Այդ դեպքերում կազմակերպության մասնակից պետությունները չեն կարող այդ իրավունքներն իրականացնել առանձին:

5. Վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Ավանդապահին:

6. Վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին իր փաստաթղթում ցանկացած Կողմ կարող է հայտարարել, որ իր համար տվյալ կոնվենցիայում ցանկացած ուղղում ուժի մեջ է մտնում միայն վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո:

Հոդված 22

1. Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրվանից երեք ամիսը լրանալուց հետո, երբ հինգ պետություններ ի պահ կհանձնեն վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան միացման մասին իրենց փաստաթղթերը:

2. Այն բանից հետո, երբ հինգ պետություններ ի պահ հանձնեն վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին իրենց փաստաթղթերը, սույն կոնվենցիան բոլոր հետագա Պայմանավորվող կողմերի համար ուժի մեջ կմտնի վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին իրենց փաստաթղթերն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիսը լրանալուց հետո:

Հոդված 23

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է հրաժարվել սույն կոնվենցիայից Ավանդապահի անունով գրավոր պաշտոնական ծանուցման միջոցով:

2. Հրաժարումն ուժի մեջ է մտնում հրաժարման մասին ծանուցումն Ավանդապահի կողմից ստանալու օրվանից վեց ամիս հետո:

Հոդված 24

Եթե սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Կողմերի թիվը տասներկու ամիս շարունակ հինգից պակաս լինի, ապա վերը նշված տասներկուամյա ժամանակահատվածը լրանալուց հետո սույն կոնվենցիան դադարում է գործել:

Հոդված 25

1. Սույն կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված՝ երկու կամ ավելի Կողմերի միջև ցանկացած վեճ հնարավորության դեպքում լուծվում է դրանց միջև բանակցությունների միջոցով:

2. Սույն կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված՝ երկու կամ ավելի Կողմերի միջև ցանկացած վեճ, որը չի կարող լուծվել սույն հոդվածի 1-ին կետում նշված եղանակներով, Կողմերից մեկի խնդրանքով ուղարկվում է արբիտրաժային (միջնորդ) դատարան, որը կազմավորվում է հետեւյալ կերպ. վեճի յուրաքանչյուր կողմ նշանակում է միջնորդ դատավոր, իսկ այդ միջնորդ դատավորները նշանակում են այլ միջնորդ դատավոր, որը նախագահն է: Եթե խնդրանքն ստանալուց երեք ամիսը լրանալուց հետո Կողմերից մեկը միջնորդ դատավոր չի նշանակում կամ եթե միջնորդ դատավորները չեն կարողանում նախագահ ընտրել, ցանկացած Կողմ կարող է միջնորդ դատավոր կամ արբիտրաժային դատարանի նախագահ նշանակելու խնդրանքով դիմել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան նշանակված արբիտրաժային դատարանի որոշումը վերջնական է եւ պարտադիր վեճի կողմերի համար:

4. Արբիտրաժային դատարանը սահմանում է ընթացակարգի իր սեփական կանոնները:

5. Արբիտրաժային դատարանն իր որոշումներն ընդունում է ձայների մեծամասնությամբ:

6. Ցանկացած տարածայնություն, որը որոշման մեկնաբանման եւ կատարման հետ կապված կարող է առաջանալ վեճի Կողմերի միջեւ, կարող է այդ Կողմերից յուրաքանչյուրի կողմից փոխանցվել այն արբիտրաժային դատարանի քննությանը, որը կայացրել է որոշումը:

7. Վեճի յուրաքանչյուր Կողմ ինքն է կրում արբիտրաժային դատարանի դատաքննության ժամանակ իր կողմից նշանակված միջնորդ դատավորի եւ իր ներկայացուցիչների ծառայություններից օգտվելու հետ կապված ծախսերը. նախագահի ծառայություններից օգտվելու հետ կապված ծախսերը եւ մյուս ծախսերը Կողմերը կրում են հավասար մասերով:

Հոդված 26

1. Սույն կոնվենցիայի ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան միանալու դեպքում ցանկացած Կողմ իրավունք ունի հայտարարելու, որ իրեն ազատում է սույն կոնվենցիայի 25-րդ հոդվածի 2-7-րդ կետերի դրույթներով նախատեսված պարտավորություններից: Մյուս Կողմերը այդպիսի վերապահում արած ցանկացած Կողմի հանդեպ կաշկանդված չեն այս կետերով:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված վերապահումն արած ցանկացած Կողմ կարող է ցանկացած ժամանակ հանել այդ վերապահումը՝ Ավանդապահին ծանուցելու միջոցով:

3. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված վերապահումների՝ սույն կոնվենցիայի մասով ոչ մի վերապահում չի թույլատրվում:

Հոդված 27

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է առաջարկել սույն կոնվենցիայի փոփոխություն եւ այն ներկայացնել Կոնվենցիայի քարտուղարություն: Կոնվենցիայի քարտուղարությունն առաջարկվող ցանկացած փոփոխության մասին տեղեկացնում է Կողմերին՝ խնդրելով իրեն ծանուցել, թե արդյոք վերջիններս կողմ են այդ առաջարկությունների վերաբերյալ որոշումների քննարկման եւ ընդունման համար Կողմերի համաժողովի անցկացմանը: Եթե այդ տեղեկացման օրվանից չորս ամսվա ընթացքում Կողմերի առնվազն մեկ երրորդը կողմ է արտահայտվում այդպիսի համաժողովի անցկացմանը, ապա Կոնվենցիայի քարտուղարությունը համաժողով է հրավիրում Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի հովանու ներքո: Ցանկացած փոփոխություն ընդունվում է փոխհամաձայնության (կոնսենսուսի) հիման վրա եւ ուղարկվում է Կողմերին:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված փոփոխությունը բոլոր Կողմերի համար ուժի մեջ է մտնում Կողմերի (*փոփոխության ընդունման օրվա դրությամբ Կողմերի թվի*) երկու երրորդի կողմից փոփոխության վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իրենց փաստաթղթերն Ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:

3. Վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին ցանկացած փաստաթուղթ, որն ի պահ է հանձնվել սույն հոդվածում շարադրված ընթացակարգին համապատասխան փոփոխության ընդունումից հետո, սակայն մինչեւ դրա ուժի մեջ մտնելը, համարվում է կոնվենցիայի նկատմամբ կիրառելի՝ փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ դրանում կատարված փոփոխություններով:

4. Սույն կոնվենցիայի փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո ի պահ հանձնված ցանկացած այդպիսի փաստաթուղթ համարվում է կոնվենցիայի նկատմամբ կիրառելի՝ դրանում կատարված փոփոխություններով:

Հոդված 28

Սույն կոնվենցիայի ավանդապահ է նշանակվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

Ի հավաստումն որի, ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները, պատշաճորեն դրա համար լիազորված լինելով, ստորագրեցին սույն կոնվենցիան:

Կատարված է Ժնևում, 2019 թվականի փետրվարի 22-ին, մեկ օրինակից՝ անգլերենով, ֆրանսերենով եւ ռուսերենով, երեք տեքստերը հավասարապես նույնական են: